ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ.

Ջ. Ա Մ Բ Ռ.

Բազմարդիւն և արժանայիշատակ Սիմէօն Կաթուղիկոսի աշխատասիրած այս պատուական և հետաքրքրական գիրքը ի լոյս ընծայուեցաւ Մայր Աթոռոյս տպարանէն։

Բովանդակութիւնն է հակիրճ Եկեղ. պատմութիւն Հայոց, Էջմիածնի բազում անցից և աղէտից նկարագիրը, Սսոյ, Աղթամարի և Գանձասարի՝ ինչպէս նա և Պօլսոյ մի քանի Պատրիարքաց ընթացից վերայ ժամանակակից նշանաւոր տեղեկութիւնք, Էջմիածնի կալուածներ և հրովարտակք և այլք յական յանուանէ, ոմանց Վանօրէից, Վիճակաց, և Նուիրակական անօրէնութեանց վերայ ծանօթութիւնք, միանգամայն իւր գործառնութեանց պատմութիւնք։

Սոքա բոլորն տեղեկութեան և ուշադրութեան արժանի պարունակութիւնք լինելով, մանաւանդ Սսոյ և Էջմիածնի իրաւասութեան եւն. նկատմամբ ի ներքուստ և յարտաքուստ լարուած մեքենայութիւնք ներկայ ժամանակիս հետ բաղդատելոյ համար, անհրաժեշտ էր այսպիսի մի ընտիր հնութիւնը հաղորդել Ազգին։

Գինն է առանց ծախուց ճանապարհի մի ռուբլի։

ՁԱՅՆԱԳՐԵԱԼ

ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆՔ ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻ.

Թէ՛ ծանր (տաղաւար եղն) և թէ՛ լուր աւուրց համար Ս. Պատարագի երգեցողութիւնք՝ Մեղեդիք, տաղք, և ամեն բան՝ ինչ որ Ս. Պատարագի երգեցողութիւնքը ըստ աւուր պատշաճի կկազմեն՝ բաց ի Խաչու Շարականաց, երկու կերպ (ծանր և յորդոր) ձայնագրեալ տպագրելով ի լոյս ընծայեցաւ։

Սորա մէջ առաւօտեան և երեկոյեան ժամերգութեանց մի քանի կարևոր Երգեր ևս իբրև ի Յաւելուած տպուած են։

Գինն է [illegible] ռբլ։

398

ԴԱՍԱԳԻՐՔ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՁԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

Հայկական Եկեղեցական ձայնագրութիւնը ընդփոյթ ընդհանրացնելոյ և արդիւնաւորելոյ համար՝ Գ. Նիկողայոս Թաշճեանց քաջահմուտ ձայնագրագէտ դասատուն պատրաստեց այս դասագիրքը, որ կարի փորձառու կանոնօք և դիւրահասկանալի եղանակով յօրինուած է։

Գինն է յիսուն կոպ։

ՕՐԱՑՈՅՑ

1875 ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ.

Յառաջակայ **1875** *Թուականի Օրացոյցը Մայր Աթոռոյս Տպարանէն հրատարակուեցաւ։*

Սովորականէն զատ՝ մի քանի ընտիր քերթուածներ, և առողջապահութեան վերաբերեալ և Պատմական կենցաղօգուտ գիտելիքներ ևլն. կան։

Ամենայն տեղ գինն է **20** *կոպ։*

Ընդ մամլով են

ՁԱՅՆԱԳՐԵԱԼ ՇԱՐԱԿԱՆ

ԴԱՍԱԳԻՐՔ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱՒԱՏՈՑ։